Է

ՍՈՒՐՂԱԹ, ՔԸՌԸՄ

ԵՒ ԿԱՖԱ ԱՆՈՒԱՆՑ ԾԱԳՄԱՆ ՎԵՐԱՑ

Ի Կաֆայէ երեք ժամ հեռի, 27 վերստ դէպ 'ի արևմտեան-հարաւ, լեռներուն մէջ գտնուած փոքր քաղաքը, որ այժմ Հին-Ղրիմ անունը կը կրէ, առ Գենուացւովք Սուրղաթ կոչուած է. նոցամէ առաջ և վերջը մինչև մեր օրերը, շատ Հայեր բնակած են այդ քաղաքին մէջ։ Ց' ԺԿ. դարու ալ Թաթարաց խաներուն մայրաքաղաք եղած է, որոց փոխերանոցին և պալատներուն մնացորք մինչև վերջին ժամանակներս կեցած էին, այլ այժմ հետախաղաղ կորան։ Ի հնուց նշանաւոր և մեծ քաղաք եղած է. մեր ձեռագիրք իբրու յատկանիշ կը գործածեն հոյակապ ածականը. Թաթարք ևս ԺԳ դարէ սկսեալ, իրենց լեզուով նոյն ածականը տուած են Սուրղաթի[1]։ Ժամանակաւ հոյակապ եղած ըլլալուն տարակոյս չկայ. զի մեծ տարածութեամբ ցերուած կը տեսնուին ցիր և ցան դերբուկք և մնացորդք հին շինուածոց, որոց մէջ նշանաւոր են աղգային հայեցակիտիւ, Զար-խափան Աստուածամոր եկեղեցւոյն աւերակք. համանուն կամրջին մօտ, և այլ դերբուկք բաղանեաց և մզկթից, նոյնպէս և ստորերկրեայ լայն քարուկիր անցքեր, քաղա-

1. Սէրոյ կոչուած։